# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 2-Ա

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. «Վիգիշին» ՍՊԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն և թույլատրել կատարելու «Բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացման աշխատանքներ» շինարարական աշխատանքները:
2. Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 3-Ա

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. «Ռաֆֆ-Գրուպ» ՍՊԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն և թույլատրել կատարելու «Ալավերդի համայնքի գյուղական բնակավայրերի ոռոգման և խմելու ջրամատակարարման ցանցերի վերանորոգում՝ Աքորի, Հաղպատ, Ջիլիզա, Կաճաճկուտ և Ծաղկաշատ գյուղեր, Ակներ, Մադան, Սանահին թաղամասեր» շինարարական աշխատանքները:
2. Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 4-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Ռոբերտ Աղասու Ոսկանյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 1156197 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ռոբերտ Աղասու Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Թումանյան /նախկինում՝ Կախոյան/ 5 հասցեում գտնվող խանութ «Ճալա»-ին, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, 5 շենք, 35 խանութ փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 21
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 5-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Վոլոդյա Գուրգենի Ֆարոյանին, Կարինե Ռուբենի Ֆարոյանին, Էլյա Վոլոդյայի Ֆարոյանին, Լիլիա Վոլոդյայի Ֆարոյանին, Հասմիկ Վոլոդյայի Ֆարոյանին համասեփականության իրավունքով պատկանող՝ քաղաք Ալավերդի, Դեբեդի 2/17 բնակարանին, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, 3 շենք, 17 բնակարան փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 21
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 6-Ա

### ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՆԵՐԸ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԸ, ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ, ԾԱԾԿԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 05.01.2022թ. N 13-Ն որոշումով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բաց պատշգամբները, աստիճանահարթակը, կաթսայատունը, ծածկերը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի դիմումը, հողամասի սեփականության իրավունքի N 2287238 վկայականը, «ՏՍ-Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովա փողոց, 20 հասցեում գտնվող, «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, 0.557 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 2013 թվականին կառուցված, կադաստրի կոմիտեում 2022W2NGYK ծածկագրով հաշվառված, ընդհանուր՝ 205.5 քմ արտաքին մակերեսով (196.6 քմ ներքին մակերեսով) բաց պատշգամբները, աստիճանահարթակը, կաթսայատունը, ծածկերը և 38 հատ դռան և պատուհանի, 135 հատ միջնորմի ինքնակամ կատարված ձևափոխությունները:

2. Օրինականացված շինությունների համար սահմանված 584442 (հինգ հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր քառասուներկու) դրամ, 38 հատ դռան և պատուհանի, 135 հատ միջնորմի ինքնակամ կատարված ձևափոխությունների համար 246006 (երկու հարյուր քառասունվեց հազար վեց) դրամ վճարները սահմանված 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 21
ք. Ալավերդի